

ԱՌԱՋԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ

ՄԻ ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ԿՈՒՌՔԵՐ

(Ելջ Ի. ԳԼ. 1—6 ր.)

«Խօսեցաւ Տէր զամենայն զպատգամս զայսոսիկ և ասէ. եւ եւմ Տէր Աստուած քո որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց ի տանէ ծառայութեան. մի եղիցին քեզ այլ աստուածք բաց յիշէն»:

Մի արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան որ ինչ յերկինս ի վեր է, և որ ինչ յերկրի ի խոնարհ, և որ ինչ ի ջուրս ի ներքոյ երկրի. մի երկրպագանիցես նոցա և մի պաշտեսցես զնոսա, զի ես եւմ Տէր Աստուած քո՝ Աստուած նախանձոտ, որ հատուցանեմ զմեզս հարանց՝ որդւոց, յերիս և ի չորս ազգս ասեւեաց իմոց, և առնեմ զողորմութիւն ի հազար ազգս սիրելեաց իմոց, և ոյք պահեն զհրամանս իմ»:

Այս երկու պատուիրանները նման են մի գրամի, որը կրկին շարունակուի և որի իւրաքանչիւր կողմի վերայ գրած է մի մի հատ պատուիրան: Մի երեսի վերայ նշանակած է հրամանը՝ արգելքը, առաջին պատուիրանը — «այոյէ՛ս լսէ՛ս լիսկ միւս երեսի վերայ՝ պարտաւերջ, երկրորդ պատուիրանը — «այոյէ՛ս լսէ՛ս լիսկ: Հրամանն ասում է «մի եղիցին քեզ այլ աստուածք բաց յիշէն» դու կուռք չպիտի պաշտես, դու կռապաշտ չպիտի լինիս: Իսկ պատուիրանն ասում է. «Ես եւմ Տէր Աստուած քո» — քո արարիչը, քո ստեղծողը ես եմ:

«Ես եւմ Տէր Աստուած քո, որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց»: այսպէս է սկսուում պատուիրանը և շարունակում է «մի եղիցին քեզ այլ աստուածք բաց յիշէն»: Այս կէտը տանում է մէզ դէպի հին ուխտի աշխարհը, դէպի հրէից՝ այդ աստուածապաշտ ժողովրդի հաւատքի աշխարհը, դէպի Եգիպտոսի ծառայութիւնը, Եգիպտոսի և միակ Աս-

տուածը՝ սուտ աստուածների մէջ, Եհովան է ընտրեալ ժողովրդի Աստուածը. նա այս ազգի պատմութեան հետ անբաժան և սերտ կերպով միացած, հիւսուած է: Եհովան ընտրել էր հրէից ազգին որպէս իւր սեպհական ժողովուրդ՝ դեռ ևս նոցա նախահայրերի ժամանակ: Նա նրանց Փարաւոնների ծառայութիւնից ազատեց. նա կամեցաւ պաշտպանել սորան իւր հզօր բազկով բոլոր նեղիչների դէմ: Այն, այս բոլորը նա խոստանում է, սակայն պայմանաւոր կերպով—եթէ նա իրանից չի հեռանայ. եթէ նորա պատգամները կկատարէ: Եւ այս բոլոր պատգամները, պատուէրները բովանդակուում են մի եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն, խօսքերի մէջ, Հրէից ազգի այս յոյսն ու հաւատը մի մեծ և անուրանալի ճշմարտութիւն է պարունակում իւր մէջ, ճշմարտութիւն, որը այս ազգի պատմական կեանքիցն էլ դէնն է անցնում: Իսրայէլի միակ կոչումն ունեւորական պատմութեան մէջ շատ պարզ է եղել—Աստուծոյ մտքերի թարգման լինիլ: Այս ազգը դեռ իւր հովուական նահապետական կեանքի մէջ Տէ Աստուծոյ գաղափարը հաւատացել և պաշտել է նորան որպէս Արարիչ երկնի և երկրի, երեւելեաց և աներևոյթից, որպէս ճշմարիտ և արդարօրոգատ Աստուած: Այս հաւատը և սորան կից բոլոր բարեպաշտական արարողութիւնքը նորա համար իբրև մի անգնահատելի գանձ, իբրև մի անմոռաց յիշողութիւն պահպանուած է ամենահին ժամանակներից սկսած: Իսրայէլի հաւատը դէպի այս մի աստուածութեան գաղափարը եղել է նորա յաղթական գրօշակը ծանր պատերազմների ժամանակ՝ և մխիթարիչ, դառն բողոքների մէջ: Հրէից ազգը այս մի բուռն ժողովուրդը, որին ճակատագիրը որպէս մի շաւիղ դրել է տիեզերական պատմութեան զօրաց ճանապարհի վերայ՝ շրջապատուած Եգիպտացի, Ասորի, Պարսիկ և Բաբելացի աշխարհակալ հարեաններով, մի բուռն ժողովուրդ, որ ապրում է կռապաշտ Քանանացի, Փիւնիկեցի, Քաղդէացի հարեանների հետ, որոնք ամենայն բողոք գայթակղութեան վէճ են եղել նորա համար, բայց և այնպէս՝ չնայելով այս ծանր հանգամանքներին, նա դարձեալ իւր միակ Աստուծոյ գաղափարով ոգևորուող մարդոց՝ մարգարէների միջ-

նորդութեամբ, ծանր զոհաբերութիւններով պահպանել և ինքն էլ պահպանուել է. նա եղել է աւանդապահ հայրենի օրինաց մի եղիցին քեզ այլ աստուածք բաց չինէն:

Այս գործը քաջերին՝ հերոսներին միայն յատուկ է: Սա որքան էլ մեզ խորին թուի, այնուամենայնիւ այսօրն զուտ ճշմարտութիւն է, որ մենք ևս այսօր նոյն կեանքով ապրում ենք, ուրեմն մենք ևս մնանք իբրեւ սրդիք սրբոյն Սահակայ և Մեսրոպայ մինչև աշխարհիս վերջը: Ուր որ էլ լինինք հոյակապան Սիօնի՝ Սուրբ Էջմիածնի անուանը յիշելով թող վերանորոգուի մեր մէջ հայրենի եկեղեցւոյ փառքը և սրբութիւնքը, ինչպէս երբեմն Խորայէլը Երուսաղէմի անուանը յիշելիս: Այսպէս, բարեպաշտօն ժողովրդականք, եկէք մենք ևս կրկնե՞ք մի եղիցին քեզ այլ Աստուածք բաց չինէն:

Այս ճշմարտութիւնն անփոփոխ, անձերանալի մնում է դեռ այսօր ևս — այս հեթանոսութիւնը, այս Կռապաշտութիւնը այսօր ևս մեր շուրջը, մեր մէջը գոյութիւն ունի: Մենք կարիք չունինք զգուշանալու հեթանոսական կուռքերից, ինչպէս երբեմն խորայէլը զգուշանում էր բահաղներից, արևից, աստղերից... դժբաբուրն էլ ներկայումս կործանուել, անհետացել են, դոցանից շատերը թանկարանների զարդ են դառել: Այս մտքերն, այո՛, անհետացել են մեր շրջակայքից, նոյնպէս և մեր կրօնական ծիսակատարութիւններից: Գոնէ Հայոց եկեղեցին կարող է պարծենալ, որ նա առաքելական է, հեթանոսական ոչինչ չունի: Բայց ա՛խ, դոցա փոխարէն մեր սրտերի մէջ ուրիշ կուռքեր չեն նստել արդեօք, որոց մենք շատ անգամ անգիտակցաբար պաշտում ենք և դժբաբ ոչ թէ միայն մեր մտքի, մեր գլխի մէջն են, այլ և մեր սրտերի, մեր գործերի մէջ բուն դրել: Նոքա թէև մեր աստուածապաշտութեան մէջ չեն յիշուում, սակայն մեր ամբողջ կեանքը լիքն է այդ տեսակ կուռքերով: Միթէ Կռապիշ կամ կռոց պապիւններ չեն այն ամենը, որոց մենք իրանց արժանաւորութիւնից բարձր ենք դասում, պաշտում: Այո՛, սոքա խախտ կուռքեր, չաստուածներ են. սոքա ժամանակաւոր իրեր են, որոց մենք աստուածացնում ենք և երկրպագուութիւն տալիս:

Մենք ամենքս շատ լաւ գիտենք, ուր մեր սիրտն է, այնտեղ էլ մեր Աստուածն է: Այն ինչ որ մեզ համար բարձր է, սուրբ է ոչ թէ միայն մեր մտածողութեան, այլև մեր ցանկութեան և բոլոր գործողութեանց համար. այն ամենը, որին մեր ունեցած, չունեցածը զոհ ենք բերում, ահա նա էլ մեր Աստուածն է: Այն Աստուածը, որը մեր մտքի և դատաբարքի մէջն է, այն Աստուածը, որին մենք ուսել ենք, նա անկարող, մեռեալ, տկար աստուած է—նա մի բառ է, մի հնչիւն, մի ձայն, իսկ այն Աստուածը, որը մեր սիրտը, մեր հոգին է զեկալարում, շարժում և առաջնորդում, ահա նա է ճշմարիտ և կենդանի Աստուածը. նորան պիտի կենդանի հաւատով դիմենք: Այսպէս ուրեմն մեզ համար ևս յարմար է մի եղիցին քեզ այլ աստուածք բաց յինչն յը: «Բաց յինչն», ի՞նչ է նշանակում այս: Այսինքն բացի ի՞յստիկանի Աստուածից, բացի մի՞ հագելան Աստուածից, որը աներեւութարար միւր մէջն է և որը չպիտի մի որ և է ձեռագործ արձանով կամ պատկերով փոխարինել, բացի մի՞ աղբարար Աստուածից, որը վարձատրում և պատժում է, որը իւր բարոյական օրէնքները մարդոց սրտերի մէջն է գրել և որը աշխարհիս մէջ բարոյական կազմակերպութիւն է հաստատել. բացի մի և կենդանի Աստուածից, որը ամբողջովին կեանք և օէր է, որն ամենուրեք սէր է ցանում և կիսնք յարուցանում:

Բարեպաշտօն փողովորդականք. հաւատում էք արդեօք այս կենդանի Աստուծուն:

Երեւի գլխով, մտքով չէ՞: Ոմանք անշուշտ ոչ, նոքա չեն մօտանում նորան, բայց և չեն էլ մտածում նորա վերայ, նոքա չեն ճանաչում և ընդունում նորան կատարեալ համոզմամբ. սորան բաւական ապացոյց չէ այն հանգամանքը, որ շատերը Աստուծուն ճանաչում են նորա անունով միայն և ոչ իրանց գործքերով: Սովորութիւն է դառել ոմանց համար Աստուծոյ փոխանակ մի սղօտ, անորոշ գաղափար յիշելու զօ. բաղդ և ճակատագիր, դէպք, երկինք . . . ճակատագիրն, ասում են ոմանք, այսպէս կամեցաւ. երկինքն այսպէս էր տնօրինել և կամ օտ մի դէպք էր: Միթէ նոքա կոյր և մեռեալ հեթանոսական կուռքեր չեն: Կոյր ճակատագիր՝ առանց արգարագատու-

Թեան, դիպուած զուրկ բանականութիւնից. հակառակ կանոնաւոր մտածողութիւն. դադարի երկինք՝ առանց Ամենակարողի, որը տիեզերքը վարում է: Արթէ չկայ երկնքից դէնը՝ երկինքը կառավարող մի հոգի: Լաւ ի միտ պիտի առնենք, որ այդ մի Աստուածը ոչ թէ միայն հոգի է, այլ Կենդանի հոգի: Հեթանոսների նման չպիտի հաւատանք, թէ կոյր բազդը՝ ճակատագիրն է կառավարում, այլ պիտի հաւատանք, որ տիեզերքը իւր ներդաշնակ կանոնաւորութեամբ, իւր անփոփոխ օրէնքներով դիպաց հետեւանք չէ կարող լինիլ: Հաստատ կերպով պէտք է հաւատանք, որ երկրագնդիս վերայի բարոյական կազմակերպութիւնը դէպքի ծնունդ չէ և ոչ մարդկային մտքի գիւտ, այլ կայ մինը, որի սուրբ և իմաստուն կամքը ամենայն ինչ նախապէս տնօրինել է. նորա մէջ պէտք է որոնել այդ կազմակերպութեան յաւիտենական հիմքը: Երբեք չպիտի հաւատալ և հետեւիլ այն անձանց վարդապետութեանը, որոնք աշխարհիս սանդճագործութիւնը խելացի ընդունելով՝ հոգին նիւթիցն են տծանցում. կանոնաւորութիւնը խառնակութեան ծնունդ համարում և բանական մարդուն անբաններից սերուած: Այլ, սիրելիք, դեռ մինչև այսօր ևս ընդունած ճշմարտութիւն է—նա՞ որ աչք է ստեղծել, մի՞թէ չպիտի տեսնել կարողանայ, նա՞ որ ականջ է տուել մեզ, մի՞թէ չպիտի լսէ. նա՞ որ խելք, միտք, բանականութիւն է տուել, մի՞թէ ինքը ևս չպիտի ըմբռնէ, հասկանայ և մտածել կարողանայ. նա՞ որ կամք է տուել մեզ, մի՞թէ ինքը զուրկ պիտի լինի իւր տուածից. նա՞ որ սիրոյ հեղեղ է թափել մեզ վերայ, մի՞թէ սէր չպիտի ունենայ:

Այս կենդանի հաւատը, կպահանջէ սրտով հաւատալ, Հեթանոսական կուռքերն այստեղ մեր սրտի մէջ աւելի վտանգաւոր են և յաճախ են պատահում, քան թէ մեր գլուխների մէջ: Եւ եթէ մենք այնտեղ այդ մեծ, բայց տկար կուռքերից հեռացանք, այստեղ մեր առաջն են ելնում փառք՝ ընտանեկան կուռքերը, որոնք մեր սիրտն ու հոգին գրաւում են և ստիպում մեզ իրանց ծառայել: Երկուց տէրանց չի կարելի ծառայել — Աստուծուն և մամոնային ծառայ լինիլ

անկարելի է:

Բայց և այնպէս որքան բազմաթիւ են մամոնայի երկրպագուները. որքան շատ է ոսկէ հորթ յարգողների թիւը, ինչպէս հրեմն իսրայէլը, որ պարուժ և ուրախանում էր նորա շուրջը: Այս ոսկէ կուռքը միայն փայլուն մետաղը չէ, որին փողով կտրելի է գնել և վաճառել: Քանի՜ քանի՜ մարդիկ կան, որոնք փողն իրանց համար կուռք են շինել, իրանց կեանքի նպատակն են դարձրել և իրանց փառքն ու պատիւը այնտեղ ասնում: Քանի՜ քանիսնների համար աշխարհիս վերայ միայն փողն է իբրև բարի բան յայտնի: Նոքա, որոնք ունին այդ դրամը, կարծում են որ, երջանկութիւնը, ուրախութիւնը ևս ձեռք բերած ունին և ընդհակառակն՝ այնտեղ՝ ուր փողը չկայ այլ ևս, այդպիսեաց մէջ տիրում է փոքրահոգութիւն, երկիւղ և վհատութիւն: Նորան ստանալու համար ծախում են իրանց պատիւն էլ, բարի անունն էլ, խիղճն էլ՝ խիղճը, այդ թանկագին անգնահատելի, յաւիտենական հարստութիւնը փոխում են ժամանակաւորի հետ: Այդ փող կոչեցեալը այդպիսեաց համար միակ բարի բանն է, նոցա կուռքն է, Աստուածն է:

Մի ուրիշ կուռք, որին մարդիկ իրանց ամենաթանկագին ունեցածը զոհում են, նայն իսկ իրանց կեանքը՝ Լայել Բաա-կան-Մէն, աշխարհային ուրախութիւն ասած բանն է: Այս երկրորդ կուռքը առաջինի հետ այնքան մօտիկ կապուած է, որ հազիւ թէ կարելի լինի բաժանել: Նախ դժուար է ասել, թէ որ կուռքն աւելի զօրաւոր է: Նախորն այդ բաւականութիւնը ձեռք բերելու համար տաք սրտով դիմում են դէպի փողը, որովհետև նա ճշտ է բաւականութիւն ձեռք բերելու համար, որովհետև այն բազմաոտեսակ բաւականութիւնքը, որոնցով հարուստ է մեր ժամանակը, այն բոլոր յարմարութիւնքը, որոնցով մենք մեզ հանգիստ ենք զգում, բոլորն էլ փողով ենք ձեռք բերում: Նախ իրաւացի է այն նկատողութիւնը թէ ամենայն բան փողից կախումն ունի, ամենքը՝ դէպի փողն են դիմում: Փող աշխատել ազնիւ ճանապարհով, հարստութիւն վաստակել ներելի միջոցով միշտ գովելի է: Բայց ի՞նչ են անում շատերը:—Այդպիսիք փող չեն աշխատում, որ իրանց որդւոց

և թուռների ապագան ապահովեն և հանգիստ ու ապտհով կեանք վարեն: Այդպիսեաց նպատակը բոլորովին այլ է, նոքա ասում են—ներկայ դարումն ամենայն բան արագ քայլերով է յառաջ գնում, ամենուրեք կեանք և շարժողութիւն է. անվիտ է նա՝ ով ապագայի վերայ է մտածում. ապագան թող ինքն իրան համար մտածէ, վասն զի կեանք ասելդ նշանակում է ապրիլ, բուսականութիւն ստանալ, իսկ մեռնիլ նշանակում է այլ ևս գոյութիւն չունենալ—ուրեմն է ուտել և խմել, վաղն այլ ևս չկանք: Սա հեթանոսութիւն է, սիրելիք, ապրիլ միայն ներկայի համար, Բայց տարաբաղդաբար բազմաթիւ է այդտեսակ հեթանոս - քրիստոնէից թիւը մեր մէջ, Շատերը թէև չեն վստահանում պաշտպանել այս միտքը, բայց իրանց գործքով նոյն հեթանոսներն են. այդպիսեաց կեանքի միակ նպատակն է, «կեր, արք և ուրախ լեր անձն իմ»: Այդպիսեաց վիճակը դառն է, նոցա անկանոն կեանքը ոչինչ բուսականութիւն չէ պատճառում իրանց, այդպիսիք թշուառանում են, որովհետև այդ վայելքները, այդ կեր ու խումբը բուսականութիւն են պատճառում նոցա ստամոքսին միայն՝ գլուխը, սիրտը, հոգին մընում են սոված, դատարկ—այն վայելքները միայնակ՝ մեր սիրտը, մեր հոգին չեն կարող կերակրել, որովհետև դոքա կուռքեր, չաստուածներ են:

Մի երկրորդ կուռք, որի դէմքի վերայ ազնիւ գծեր են դրոշմուած՝ պատիւ, փառք ասածն է: Սա մարմնական ղգայարանական վայելք չէ, որին մենք ամենայն ինչ զոհեցինք, սա հագեցան է, Դոտար է, սա մեր գլուխը, մեր սիրտն է: Այստեղ գործ ենք դնում մեր մտաւոր կարողութիւնները, մեր տաղանդը, մեր հանճարը՝ մեզ ցոյց տալու համար և այս բոլորը նորա համար, որպէս զի ուրիշները մեզ մատով ցոյց տան, որպէս զի պատիւ և փառք վայելենք մեր շրջապատողներին: Թերևս հարցնողներ լինեն, ի՞նչ մի աններելի բան է այդ, որից մենք պիտի խորշենք. ի՞նչ վատ բան է, երբ մեր շրջապատողները մեզ գովում, յարգում և պատուում են: Միթէ գովելի չէ աշխատել Աստուծոյ տուած շնորհքով ելնել մինչև պատուոյ լերան գագաթը և այնտեղից որպէս ճրագ ի վերայ աշտանակի լոյս արձակել իւր

շուրջը: Միթէ Գրիստոս ինքը չասաց «այսպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան»: Այո՛, սա մի գովելի ձգտումն է, սա ազնիւ պատուասիրութիւնն է, պատուի զգացումն է: Բայց ճիշդան զանազանութիւն այս պատուասիրութեան և սովորական հիւանդութիւն դարձած փառասիրութեան մէջ: Տարբերութիւնը մեծ է, այնպէս՝ ինչպէս իսկական ոսկին և կեղծ փայլը, ինչպէս ճշմարտութիւն և ստութիւն, ինչպէս իրականութիւն և երեւոյթ, ինչպէս կեղծ և սուրբ սէրը: Ճշմարիտ, ազնիւ պատուասիրութիւնը հաւասար է սուրբ սիրուն, որը, միշտ ձգտում է դէպի լաւը, բարին. նա ասում է տգեղը, զինուում է կեղծ ձեւապաշտութեան, փառասիրութեան դէմ: Ճշմարիտ, ազնիւ պատուասիրութիւնը միշտ ձգտում է դէպի Գոթ՝, դէպի բարձրելոյ ծառայութիւնը: Աստուծոյ արքայութեան մէջ՝ երկրիս վերայ: Ընդհակառակն կեղծ պատուասիրութիւնը ցանկանում է փայլել և խելել: Նա պծնում է արտաքին և կեղծ զարգարանքներով, տիտղոսներով, մեծամեծ պաշտօններով՝ այնպէս՝ ինչպէս մի երեխայ, որպէս զի բեմի վերայ իբրև հերոս փայլէ, ամբօխին ի տես նստէ՝ նոցանից փառաբանուելու համար: Դա փառասիրութիւն է և ոչ ազնիւ պատուասիրութիւն — դա կռապաշտութիւն է, գորանով մեր սիրտն ապականում, աւերում ենք: Կռռքը մեր սեպհական է: Այս կռռքը, որի առաջ մենք ամեն օր պսակ ենք դնում, որին մենք առաւօտից մինչև երեկոյ փառաբանում և գովում ենք, վարագուրուած է: Գեղեցիկ և փքուն խօսքերով, կեղծ զգայութիւններով խաբում ենք մենք մեզ էլ, ուրիշներին էլ: Մենք մեր վարմունքով, այո՛, կռոց պաշտօնեաներ ենք, մեր գործնէութիւնը շրջան է առնում միշտ Տեղ շուրջը: Աշխարհիս մէջ մեղանից դուրս ոչ ոքի չենք ընդունում. մենք սիրում և յարգում ենք նրանց միայն, որոնք մեզ սիրում և յարգում են. մենք պաշտում ենք մեզ, մենք մեր առաջ աղօթում ենք — մենք մեր սեպհական կռռքերն ենք:

Այսպէս ուրեմն, սիրելիք, փողը, վայելքը, բաւականութիւնը, փառքը կռռք ենք դարձնում և պաշտում ու այսպէս հակառակում Աստուծոյ պատուիրանին, որ ասում է «մի

արասցես քեզ կուռսս:

Դրամի մի երեսը կարգալուց յետոյ՝ շուռ տանք նորա միւս երեսը և տեսնենք, թէ ինչ է գրած: «Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումէ»: Աստուծուն պէտք է ամեն բանից աւելի սիրել, ամեն բանից աւելի նորանից պէտք է երկիւղ ունենալ, Սա մի առանձին խորհուրդ ունի—մենք յաւիտեանակա-
նին ժամանակաւորի հաւասար չպիտի սիրենք, որովհետեւ երկուց տէրանց չի կարելի ծառայել: Աստուծուն ժամանակաւոր գոյութիւն ունեցող իրերից պէտք է զանազանենք. ամեն բանից բարձր դասենք՝ իբրեւ մեր միակ տիրոջ: Բայց միթէ գահնարաւոր է: Նորան, որին մենք չենք տեսնում, ի՞նչպէս կարող ենք ամեն բանից աւելի սիրել: Երկինքը բարձր, Աստուած հեռու մեզանից, նորա մտածողութեան եղանակը մերինի նման չէ, նորա վճիռները շատ անգամ անհասկանալի են մեզ համար, նորա սէրն առ մարդիկ այնքան մեծ է, որ մենք մեր փոքր սրտերի մէջ անկարող ենք պտրուենակել, անկարող ենք նորան փոխադարձ սէր ցոյց տալու: Միթէ Աստուծուն աւելի պիտի սիրենք քան թէ մեր մերձաւորներին—հայր, մայր, կին, որդի . . . : Այո՛, սիրելիք, ձեր նկատողութիւնն արդարացի կլինէր, եթէ իրօք Աստուած այդքան հեռու լինէր մեզանից, այդքան բարձր և անհասկանալի մեզ համար: Եթե մեր ներքինում նստած չլինէր Աստուծոյ փոխանորդը՝ մեր խիղճը, որը մեզ աւելի մօտիկ է՝ քան թէ հայր, մայր, կին և որդի: Ուրեմն Աստուած հեռու չէ մեզանից. նա մեզ ամենից մօտիկ է, ուրեմն լսենք Աստուծուն, որովհետեւ այս ձայնը նորանն է. մեր սրտի ամեն մի կայծը բղխում է տղա յաւիտեանական աղբիւրից՝ Աստուածանից: Բոլոր ճշմարտութիւնները, որոնք մեզ շրջապատում են՝ նորա լուսոյ ճառագայթների փայլն են: Այն սէրը, որով մեր հոգիքը սիրում ենք, մերը չէ, նորանիցն է բղխած:

Ամեն բանից աւելի նորանից պէտք է երկիւղ ունենալ: Ի՞նչ է նշանակում սա: Սխալ չհասկանանք այս խիստ խօսքը: Սա

պատժի երկիւղը չէ, քրից մենք վախենում էինք, ու կոյր հը-
նազանդութիւնը չէ, որին հաւատում ենք: Սա յարգանք կո-
չուած զգացումն է, մենք ոչ թէ երկիւղից ստիպուած պիտի
սիրենք Աստուծուն, այլ յարգանաց, պատուի զգացումն պիտի
մեզ հարկադրէ նոյնն անել: Սորան ուրիշ խօսքով ասում են
էրէկ-ը Աստուծոյ: Սա է, որը մեզ ոյժ և կարողութիւն է պար-
գեւում, սա է մեզ քաջ, հերոս դարձնողը, որի վերայից հոգմն
ու փոթորիկները սահում անցնում են, և մենք մնում ենք
աննկուն, անսասան:

Այն սէրը, որը մենք դէպի Աստուած ունինք՝ մի տեսակ հա-
ւատարմութիւն է, որին հասարակ ենք անուանում: Սա՝ հաւա-
տը տկարի, օգնութեան կարօտ անհատի սէրն է, որը յենած
յուսոյ գաւազանի վերայ չէ վճատում, նա հաւատում է,
նա երգում է սաղմոսերգուի հետ «Թէպէտ և գնացից ես ի
մէջ սուտերաց մահու» ոչ երկեայց ի չարէ, զի դու Տէր ընդ-
իս ես, ցուպ քո և գաւազան, նոքա մխիթարեսցեն զիս: Այն
նորա գաւազանը մեզ կպաշտպանէ, հաւատանք նորան, յոյս-
նիրս նորս վերայ դնենք—Ո՛վ յոյսը իւր գաւազանի, իւր զօ-
րութեան, իւր հարստութեան, իւր իմաստութեան վերայ է
դնում, նա միշտ զղջում է. իսկ որ յոյսն Աստուծոյ վերայ է
դնում, նա երբէք չի սխալուում:

Այսպէս, սիրելիք, հաւատացէք և յոյսներդ նորա վերայ
դրէք: Երբ ձեր սեօրուան վերջին կոպէկն ուտէք, երբ աղքա-
տութիւնը և կարիքը ձեր դռնից ներս մտնէ, երբ ձեր վիճակը,
քանի գնայ՝ յատթարանայ, երբ ձեր (հարուստ) բարեկամները
ձեզանից հեռանան և ձեզ միայնակ թողնեն, այն ժամանակ ևս
մի յուսահատուէք և մի ասէք թէ կորած ենք, այլ վերև նա-
յեցէք, յոյս և հաւատ ունեցէք դէպի բարձրեալը, ամպերից
դէնն էլ կապոյտ երկինք կայ. Աստուծուն յայտնեցէք ձեր ճա-
նապարհը, նա ձեր դառը վիճակը կքաղցրացնէ — « յայտնեա՛
առաջի Տեառն զճտնապարհս քո և յուսած ի նա »:

Երկրիս վերայի բոլոր ազգերի մէջ հազիւ թէ մինը լինի, որն
այնքան հին լինի, ինչպէս իսրայէլը—նորա հասակակիցները բո-

լորն էլ անհետացել են, սակայն խորայելը իւր Սիօնն ու Երուսաղէմը յիշելով ոչ միայն առ գետն բաբելացւոց, այլ և հռհնոսի եղբայրներում, գանգէսի ավերում, կենդանի է մնացել, Եհովայի հայրենի Աստուծուն, հայրենի դաւանած կրօնն ու սրբութիւնքը չէ մոռացել նա, ուր որ էլ եղել է։ Այս կողմից նա պատմութեան համար նոյն իսկ մի անբացատրելի երեւոյթ է գեռ ևս։ Այսպէս մենք ևս, սիրելիք, մեր Սիօնը, մեր Երուսաղէմը, Քրիստոս, Երկրային, սուրբ Գրիգոր Լուսաւորչի հաւատոր, հայրենի տաճարներն ու սրբութիւնքը, աջն ու խաչը, սեղանն ու խորանը չմոռանանք, Ինչպէս ամենայն մի բարեպաշտ հրէի պարտք էր գոնէ պասեքի տօնին տաճար գնալ, այսպէս թող ամենայն հայ գէթ իւր կեանքի ընթացքում՝ իրոն սուրբ պարտականութիւն համարէ այցելել այդ սուրբ վայրը և նորա սուրբ հայրապետների "օրհնութեամբ օծուած քարերը համբուրել, Երբ մինք ևս այսպէս կվարուենք, այսպէս կյուսանք և կհաւատանք, այն ժամանակ Աստուած մեզ ևս կընդունէ ի շարք ընտրեալ ազգի և Կիւրի, ինչպէս որ ինքը խոստացել է իւր պատուիրանի մէջ «ես եմ Տէր Աստուած քո» :

Տէրիւն.

ՍԱՀԱԿ ՔԱՀ. ՍԱՀԱԿԵԱՆՅ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՆԿԱՐԱԳԻՐ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՆՈՒՅ

ԵՒ

ՎԻՃԱԿԻ ՆԱՐԻՆ ԲԱԳՐԵՒԱՆԴԱՅ,

(Շարանաւանդիւն)

Ժ.

Որպէս ղէնքը բռնաւորին ձեռք յաջող գործիք մի է, իւր չար նպատակն ի յանգ ածելոյ, այսպէս և, երբ պաշտօն մը կը